

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՔ»



Եկ.1. Մատենադարանի նոր շենքի ընդհանուր տեսքը

1959 թվականով նոր էլ է բացվում Հայ հին մշակույթի դարձնողներից մեկի՝ Հայ ձեռագրերի պահպանության հնադարան Մատենադարանի շարքերի մեջ:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի 1959 թ. մարտի 3-ի № 71 որոշմամբ Մատենադարանը վերակառուցվեց ու դարձավ դիտա-հետազոտական հաստատություն: Երկար դարերի դժվարին ճանապարհ անցած Մատենադարանի պատմության համար շրջադարձաչին նշանակություն ունեցող այդ որոշումը զուգահեռաբար Մատենադարանի հույակապ նոր շենքի կառուցման աշխատանքների ավարտի հետ Այսպիսով հիանալի առիթ է ներկայանում

հայագիտական լայն հասարակայնության անունից երախտագիտական սրտարուխ խոսք ասելու Հայաստանի Կոմունիստական պարտիայի և Կուլավարության ղեկավարությանը, որոնք Հայ հնադարյան մշակույթի մեծարժեք հուշարձանների հավերժ պահպանության համար արեցին առավելագույնը: Միաժամանակ պահանջ է զգացվում համառոտ մի ակնարկ նետելու Մատենադարանի անցյալի վրա և մեր ընթերցողներին ծանոթացնելու այն խնդիրների հետ, որոնց լուծման համար կյանքի է կոչվել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առերևիբ հին ձեռագրերի դիտա-հետազոտական ինստիտուտ «Մատենադարանը»:

* * *

Հայ ժողովուրդն իր ռազմադարյա կյանքի ու մարտունակության ընթացքում կերտել է նյութական ու հոգեոր մեծարժեք հուշարձաններ: Համրնթաց է բայել նա աշխարհի հնագույն կուլտուրական ժողովուրդների հետ, մշակույթային, տնտեսական ու քաղաքական բնագավառներում շփվել է նրանց հետ, ազդվել նրանցից ու փոխազդել նրանց վրա: Այդ իսկ պատճառով հայ ստեղծագործ մտքի արգասիք հուշարձաններից շատերը, պատկերով ազգային նեղ շրջանակները, իրենց պատշաճ տեղն են գրավել համաշխարհային կուլտուրայի զանազանում: Այդ հուշարձանների շարքում առաջնակարգ տեղ ունեն հայերեն ձեռագիր մատյանները:

Հայ ձեռագրերի կարգավորյալ մատենադարաններ գոյություն են ունեցել նաև միջնադարյան մշակույթային նշանավոր օջախներին առնթրելով—Հաղրատում, Սանահնում, Գլաձորում, Տաթևում, Աղթամարում, Մաշտում, Նրզարեկայի շրջակայքում, Կիլիկիայի գրչության կենտրոններում և այլուր: Դրանցից շատերը ունեցել են նույնիսկ հատուկ շենքեր-գրատներ ձեռագրերի պահպանման, ընդօրինակման և ուսումնասիրության համար:

Սակայն երկարատև չի եղել նրանց կյանքը: հարատև պատերազմների ու արշավանքների թոհուրոհում, օտար նվաճողների ու ասպատակողների կողմից, ի թիվս նյութական ու հոգևոր այլ արժեքների, ոչնչացվել են նաև տասնյակ հազարավոր հայերեն ձեռագրեր:

Ասպատակիչներին չեն զիջել տգետ վանականները, որոնց համար դուրրնթևների որևէ մաշտոց, կամ մի այլ ծիսական գիրք Խոտ ավելի արժեք է ունեղև, քան մագաղաթյա խոնացած ու գժվարմեծանելի հնադարյան իմաստասիրական մի աշխատություն:

Պատմական նույն ճակատագիրն է ունեցել նաև էջմիածնի մատենադարանը, որի հազարամյա կյանքին հնարավոր է լինում, անշուշտ, ընդմիջումներով հետևել 1441 թվականից սկսած, երբ ամենայն հայոց կաթողիկոսությունը վերահաստատվեց էջմիածնում:

Հայտնի է, որ XVII դարի կեսերին այնտեղ կային «ղգրեանց բազմութիւնս զանազան մատենից», որոնք գտնվում էին «գործապանիս հսկողութիւնս ներսոս»:

Տարաբախտաբար, XVIII դարի ընթացքում էջմիածինը բազմիցս ասպատակվել ու կողոպտվել է պարսիկ իշխողների կողմից, այնպես որ 1814 թվականին էջմիածնի մատենադարանը, կորցրած լինելով ձեռագիր իր զանազան մեծագույն մասը, ժամանակակիցների կողմից կոչ-

վել է «կապտեալ գրատուն աթոռոյն Արարատեան»:

Մատենադարանի համար նոր շրջան է սկսվում 1828 թվականից հետո, երբ Արևելյան Հայաստանը, թոթափելով պարսկական լուծը, մտնում է ռուսական պետության հովանու տակ:

Մատենադարանի ձեռագրական հավաքածուի ճոխացման և առկա ձեռագրերի կարգավորման ու գրանցման գործով սկսում են զբաղվել էջմիածնի միաբանության գիտնական անդամներ՝ Մանուել Բյուրաշյանցին, Հովհաննես Եսայաթուրյանցը, Դանիել Եպիսկոպոսը, իսկ այնուհետև՝ Սահակ Ամատունին, Գարեգին Հովսեփյանը, Մեսրոպ Տեր-Մովսիսյանը և ուրիշներ:

1837 թ. մատենադարանում կար ընդամենը 312 ձեռագիր:

Չի անցնում երեք տասնամյակ, 1863 թվականին, տպագրվում է էջմիածնի մատենադարանի ձեռագրերի համառոտ ցանկը՝ «Մայր ցուցակ» խոստումնալից վերնագրով. այդ ժամանակ արդեն մատենադարանում կար 2340 ձեռագիր: Ձեռագրերի ժողովումը, ավելի կամ պակաս եռանդով, շարունակվում է նաև հետագա տասնամյակներում: էջմիածին են բերվում ու մոծվում մատենադարան Թաղեսու առաքյալի, Տաթևի, Սևանի վանքերի և այլ հաստատությունների ու մասնավոր անձանց պատկանող ձեռագրերը, որով ձեռագրերի քանակը 1914 թվականի վերջերին հասնում է 4660-ի:

Առաջին համաշխարհային պատերազմի օրհասական օրերին, երբ հայ ժողովրդի արևմտյան հատվածի ծրագրված բնաջնջման հետ զուգընթաց թուրք վանդալները հրի ու սրի միջոցով ոչնչացնում էին նաև հայ ժողովրդի դարավոր մշակույթի մեծարժեք հուշարձանները՝ վտանգավոր կացություն է ստեղծվում նաև էջմիածնի մատենադարանի համար: Մատենադարանի ձեռագրական զանազան ապահով վայր տեղափոխելու հարցը մտահոգում է հայ հասարակական լայն շրջաններին, և որոշվում է մատենադարանի ձեռագրերը ժամանակավորապես տեղափոխել Մոսկվա: 1915 թ. փետրվարի 3-ին էջմիածնից Մոսկվա է ուղարկվում մատենադարանի ձեռագրական ողջ հավաքածուն:

Ռեուլյուցիայի հաղթանակից հետո Մոսկվայում աշխատող հայ կոմունիստները (Վ. Ավանեսով, Ս. Տեր-Գարրիկյան, Պ. Մակեդոնյան) աշխուրջ հետևում էին հայերեն ձեռագրերի անվթար պահպանմանը:

Մատենադարանի պատմությունը նոր թև է առնում հունի մեջ է մտնում Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից՝ 1920 թ. նոյեմբերի 29-ից հետո:

ՀՄԽՀ Հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 17-ի դեկրետով բոլոր կուլտուրական հիմնարկությունների հետ մեկտեղ պետականացվում է նաև էջմիածնի Մատենադարանը: Սովետական Հայաստանի կառավարությունը, դաշնակների կողմից արյունաքամ արված Հայաստանի ժողովրդական տնտեսության վերականգնման դժվարագույն հարցերի լուծման հետ զուգընթաց, մեծ ուշադրություն է դարձնում կուլտուրական հիմնարկների և, մասնավորապես, Մատենադարանի վրա:

Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը 1922 թ. մարտի 6-ին Պ. Մակինցյանին լիազորում է Մոսկվայում պահվող ձեռագրերը Հայաստան տեղափոխել և նրան տված մանդատով խնդրում ՌՍՖՍՐ-ի բոլոր հիմնարկներին, հնարավոր միջոցներով օժանդակել այդ գործին: 1922 թ. ապրիլի 5-ին, 20-ից ավելի հայ գիտնականների ուղեկցությամբ, Մոսկվայից Երևան են վերադարձվում Մատենադարանի ձեռագրերը:

Մինչև ձեռագրական բուն հավաքածուի Մոսկվայից վերադարձվելը, Մատենադարանն էին մուծվել Վասպուրականի ու Տարսնի վանքերից և այլ վայրերից (Լիմ, Կոտուց, Աղթամար, Վարագ, Վան, Մուշ) բերված 1730 ձեռագրերը:

Հետագա տարիներին, մինչև 1938 թվականը, հայերեն հին ձեռագրերի Հայաստանի սահմաններից դուրս գտնվող մանր հավաքածուների կինտրոնացման ու գնումների ճանապարհով ձեռագրական գանձերի հավաքման աշխատանքը տարվում է պետական երկու հիմնարկների՝ էջմիածնում Մատենադարանի, իսկ Երևանում՝ 1922 թ. ստեղծված Կուլտուր-պատմական թանգարանի կողմից (թանգարանի ձեռագրերը 1938 թ. հանձնվում են Մատենադարանին):

Մատենադարանի վարիչ Ս. Տեր-Հակոբյանի, ինչպես նաև Կուլտուր-պատմական ինստիտուտի հիմնադիր-աշխատակիցներ Ե. Շահազիզի, Ե. Հալալյանի և այլոց ջանքերով հաջողվում է Հայաստան բերել Նոր-Նախիջևանից, Մոսկվայի Հաղարյան ճեմարանից, Թիֆլիսի ազգագրական ընկերությունից, Սանասարյան վարժարանից և բազմաթիվ այլ վայրերից, հաստատություններից ու մասնավոր մարդկանցից ավելի քան 2 հազար ձեռագրեր:

1939 թվականին Մատենադարանը էջմիածնից տեղափոխվում է Երևան, ժամանակավորապես տեղավորվելով Ալ. Մյասնիկյանի անվան Պետական հանրային գրադարանի համար կառուցված շինոթի մի հարկարաժնում:

Ձեռագրերի հավաքման աշխատանքը շարունակվում է նաև հետագա տարիներին, այն Մատենադարանի կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում նաև այսօր: Այդ


նպատակով Հայաստանի և հարևան ռեսպուբլիկաների շրջաններն են գործուղվում Մատենադարանի առանձին աշխատակիցներ և աշխատակիցներից կազմված խմբեր: Այդ մեծ դերում Մատենադարանն ամենալայն օժանդակություն է ստացել Հայաստանի աշխատավորության և սփյուռքահայության ամենալայն շրջաններից:

Ձեռագրական մեր հավաքածուի համալրումը զգալի չափով կատարվում է նվիրաբերությունների ճանապարհով: 1955 թվականին Մատենադարանը նվեր ստացավ 42 արժեքավոր ձեռագրերի մի հավաքածու ռումինահայ հայրենասերներից:

Արդեն երրորդ տարին է, ինչ հաջողարձակ հայրենասեր ժամագործ Հովսեփ Տետեյանը, կանգ չառնելով նյութական զոհողությունների առջև, խորը մտահոգությամբ ցուցաբերելով հայրենի ձեռագրերը կորստից փրկելու և Մայր հայրենիք ուղարկելու գործում, մեծ եռանդով փնտրում է ձեռագրեր, գնում տարբեր վայրերից և նվեր ուղարկում Մատենադարան: Առ այսօր նրանից ստացել ենք 7 հայերեն և 2 օրարատառ ձեռագրեր: Մատենադարանի ձեռագիր հավաքածուների ճոխացման գործին զգալի նպաստ են բերել նաև պատմաբան Ա. Գ. Հովհաննիսյանը, պրոֆ. Լ. Ա. Հովհաննիսյանը, արվեստագիտության դոկտոր Ս. Ս. Լիսիցյանը, կոմպոզիտոր Հարո և քանդակագործ Գյուրեն Ստեփանյան և լղրայինները, գյուղատնտես Սամվել Հարությունյանը և ուրիշներ՝ Սովետական Հայաստանից և Սրբուհի Անանյանը (Թեհրան), Սեփան Ավյանը (Տուկսոն, ԱՄՆ), Հակոբ Աբրահամյանը (Կ. Պոլիս), Ալսոն Գևորգյանը (Սան-Ֆրանցիսկո) և ուրիշներ՝ արստատաճմանից:

Իր անցյալ կուլտուրայի մեծադիպ հուշարձանների Մատենադարանին հանձնելու միջոցով կորստից փրկելու գործի նկատմամբ հայ աշխատավորության լայն շրջանների նախանձախնդիր վերաբերմունքով ակտիվ աջակցություն ցուցաբերել են Մատենադարանի և Մատենադարանի ձեռագրերի հավաքման գործին:

Հայերեն ամբողջական ձեռագրեր	9411 մատյան
Հայերեն ձեռագրերի պատմական-ընկեր	1818 կտոր
Պահպանակի դեր կատարող պատմականներ	3000 կտոր
Արարատառ ձեռագրեր (մոտավոր հաշվով)	633 մատյան
Այլ լեզուներով ձեռագրեր	63 մատյան
Հայերեն հմայիլներ	163 փաթեթ
Այլ լեզուներով հմայիլներ	30 փաթեթ:



Նկ. 2. Հայադիրտու թխան աշխատասրահի մի հատված

Այսպիսով, Պետական Մատենադարանը շենոսագրական իր բաժնում ունենալով շուրջ 16 հազար ձեռագրական միավոր, շատ ավելի հարուստ է, քան հայերեն ձեռագրերի մյուս խոշոր մատենադարանները (Նրուսաղեմ, Վենետիկ, Վիեննա)՝ միասին վերցրած:

Մատենադարանը հայտնի է մեր հայաստանյանությանը գերազանցապես իր ձեռագիր դանձերով. սակայն հայագիտության համար ոչ պակաս նշանակություն ունեն նաև նրա մյուս բաժինները՝ հարուստ արխիվը, հնատիպ գրքերի և հայ պարերական մամուլի ճոխ հավաքածուները, հայագիտական գրադարանը և այլն:

Արխիվային բաժնի հիմնական ու արժեքավոր ֆոնդերն են. ա) կաթողիկոսական դիվանը—35.761 վավերագրերով, բ) «Անհատական արխիվներ» կոչվող ֆոնդը—33.342 վավերագրերով և գ) լադարյանների ֆոնդը—8702 վավերագրով:

Կաթողիկոսական դիվանի արժեքավոր վավերագրերը (կաթողիկոսական կոնդակներ, շահական ու սուլթանական հրովարտական, կալվածքների գնման, վաճառման ու նվիրարեման մասին պաշտոնական փաստաթղթեր) անուպառ նյութեր են պարունակում XV—XIX դարերի Հայաստանի և հարևան երկրների լատմության այլևայլ բնագավառների մասին: Մեծ է նրանց նշանակությունը նաև XVIII—XIX դարերի հայ հասարակական հոսանքների, ազատագրական շարժումների, հայ-ոսմանոլորդների կոլուտուրական ու քաղաքական կապերի, հայ նշանավոր գործիչների կյանքի ու գործունեության գրվագների ուսումնասիրման գործում:

Արխիվային բաժնի նույնպես համայնվում է նոր ձևեր բերվող ֆոնդերով, դիվանական կարևոր գործերով ու առանձին փաստաթղթերով: Լուդարյանների ֆոնդը, օրինակ, Մատենադարանի սեփականությունը դարձավ 1957 թվականին. 1958 թվականին, ի թիվս այլ փաստաթղթերի, Արխիվային բաժնի ձեռք բերեց երևանցի Մելիք-Շահնազարյան ֆեոդալական բնույթի կալվածքների շուրջն ստեղծված դատական գործի փաստաթղթերը, որոնց մեկն XVI—XVII դարի և հետագայի պարսկերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով արժեքավոր բազմաթիվ բնագրեր (Շահ-Քահ-մադի 1538 թ., Շահ-Արամի 1603 թ., 1610 թ., 1613 թ., Շահ-Ալիի 1636 թ. հրովարտականը և այլն), ինչպես և հայ ֆեոդալների իրավունքների ու արտոնությունների մասին ուշագրավ այլ վավերագրեր:

Մատենադարանի օրրստօրն ավելացող, առայսօր 1620 միավորից կազմված հնատիպ գրք-

քերի հավաքածուի մեջ պահվում են հայ տպագրության երախայրիք «Պարզատումարի» (Վենետիկ, 1512 թ.), նրան հաջորդած «Ուրարագրքի», «Տաղարանի» և «Աղթարքի» անվթար պահված օրինակները, Արգար Թոխաթեցու (Կ. Պոլիս), Հովհաննես Տերզեցու (Հոմ), Ոսկան Օրեանցու (Ամստերդամ) և հայ հին այլ տպագրիչների կողմից հրատարակված դրքերը ամբողջությամբ, ինչպես նաև բազմաթիվ այլ հնատիպ գրքեր, որոնք ծանոթ չլինելով հայկական մատենագիտությանը նվիրված աշխատությունների հեղինակներին, չեն հիշված մատենագիտական աշխատություններում ու ցանկերում: Դրանց մասնագիտական ուսումնասիրությամբ հնարավոր կլինի զգալի ճշտումներ և լրացումներ կատարել հայ տպագրության պատմության էջերում:


Պարբերական մամուլի բաժնի անմրցելի է հայերեն հազվագյուտ թերթերի ու ամսագրերի հարուստ իր հավաքածուներով: Այստեղ են պահվում հայ անդրանիկ պարբերական «Ազդարարի» անթերի օրինակը, տպագրված Մագրասում 1794—96 թթ., «Բազմավկաի», «Հանդես Ամսրեայի» «Սիոնի», «Մեղվի», «Մշակի», «Արծի Վասպուրականի» և հարյուրավոր այլ պարբերականների հավաքածուները:

Մատենադարանի հայագիտական գրադարանը, որ շարունակարար լրացվում է անցյալում տպագրված ու նոր լույս տեսնող հայերեն, ռուսերեն և եվրոպական լեզուներով հայագիտության հետ առնչվող գրքերով—մեծապես դյուրացնում է հայ ձեռագրերի, արխիվային փաստաթղթերի և Մատենադարանի մյուս բաժինների նյութերի ուսումնասիրությունը գրադված գիտնականների աշխատանքի հաջողությանը:

* * *

Մինչև սովետական կարգերի հաղթանակը Հայաստանում Մատենադարանի ձեռագրերը դիտականորեն չէին ցուցակագրված, կային գույքամատյաններ, կազմված կարենյան կոչվող տպագիր ցուցակի սկզբունքներով, որոնց օգնությամբ, լավագույն դեպքում, կարելի էր միայն ստուգել ձեռագրերի առկայությունը տեղում, բայց ոչ բնավ ծավալել ծրագրված գիտա-հետազոտական ու աղբյուրագիտական աշխատանք:

Մատենադարանի աշխատակիցների փոքրամիավ կոլեկտիվը, գրադված լինելով հիմնականում Սովետական Միության մեջ ցրված ձեռագրական մասեր ժողովածուների հավաքման կարևոր աշխատանքով, ի վիճակի չէր անմիջապես սկսելու այդ ծանր աշխատանքը: Անշուշտ,



Նկ. 3. Շենքի ներքին ձևավորման մի նմուշ

նկատի ունենալով, որ Մատենադարանը գտնվում էր էջմիածնում, ուր ձեռագրերի գիտական ցուցակ կազմելու կարող մասնագետներ չկային: Մեծանուն հայագետներ Մ. Աբեղյանը, Վ. Մանանդյանը, Հ. Աճառյանը, Ինչպես և մեր անվանի մյուս հայագետները ձանրաբեռնված էին շատ ավելի հրատապ գիտական աշխատանքներով: Նրանք, ըստ մեծի մասին, լինելով Երևանի նորաստեղծ Պետական համալսարանի դասախոսներ, մշակում էին հայ ժողովրդի, հայ հին գրականության ու լեզվի պատմության կարևորագույն հարցերը՝ նոր լուսարանությամբ, գիտա-հետազոտական լուրջ մենագրություններ էին գրում և անդադրում աշխատում իրենց մեծարժեք աշխատությունների վրա:

Այդ իսկ պատճառով, Մատենադարանի ձեռագրական գանձերի, արխիվային ֆոնդերի, ինչպես և տպագիր գրականության ցուցակագրման ու նկարագրման գործը սկսվեց փոքր-ինչ հասլաղումով և ամուր հիմքերի վրա զրվեց այն պահից, երբ Երևանի Պետական համալսարանը սկսեց իր առաջին հայագետ շրջանավարտները:

Մատենադարան աշխատանքի գործուղվեցին համալսարանավարտ երիտասարդ պատմաբաններ Հ. Մանվելյանը, Ա. Արրահամյանը, Հ. Արրահամյանը, հետագայում նաև գրականագետ Ե. Թորոսյանը և ուրիշներ: Սրանց մասնակցությամբ ու ղեկավարությամբ կազմվեցին Մատենադարանի ձեռագրերի ընդարձակ գույքամատյանները, ձեռագրերի մայր քարտուրանը և որոշ աշխատանք տարվեց մատենագիտական ուղեցույց ցանկերի կազմման գծով: Սկսվեց նաև արխիվային խառը ֆոնդերի կարգավորման, ժամանակագրական սկզբունքով փաստաթղթերի դասավորման և ցուցակագրման աշխատանքը:

1939 թ., ինչպես ասացինք, Մատենադարանը տեղափոխվեց Երևան, ստացավ աշխատակիցներ նոր հաստիքներ: Այստեղ ավելի մեծ թափով շարունակվեցին ձեռագրերի և արխիվային փաստաթղթերի նկարագրության ու գրանցման աշխատանքները:

Ձեռագրական բաժինն ավարտեց ընդարձակ գույքամատյանների ստեղծումը՝ բոլոր առկա ձեռագրերի ընդգրկումով: Յուրաքանչյուր ձեռագիր գույքամատյանում նկարագրված է այսպիսի մանրամասնությամբ. տրված են համառոտ տվյալներ ձեռագրերի թերթերի քանակի, միջուկի, կազմի, վիճակի, գրության ժամանակի, վայրի, գրչի, ստացողի և նորոգողի մասին: Տրված է նաև ձեռագրի վերնագիրը և թիվը այն պարունակում է մի բնագիր, և կարևոր նյութերի թվարկումը, եթե այն ժողովածու է և արժանի բնագրերի:

Նույն տվյալներով կազմվեցին նաև մայր քարտեր 1937 թվականից հետո ձեռք բերված ձեռագրերի համար ու ստուգվեցին մինչև այդ կազմված քարտերը:

Ստեղծվեցին պատմագրության, փյուսոփայության, բերականագիտության, աշխարհագրության, տիեզերագիտության, բժշկության, ալքիմիայի, գեղարվեստական չափածո և արձակ գրականության և գիտության այլ բնագավառների մասին ձեռագրական բնագրերի ու նյութերի ուղեցույց թեմատիկ ցուցակներ:

Թվարկված ցուցակներից յուրաքանչյուրում, այրենական դասավորությամբ, տրված են այն հեղինակների անունները, որոնցից գիտություն այլ բնագավառին վերաբերող աշխատություններ են պահպանվել: այնուհետև, հեղինակի մասին համառոտ տեղեկություններից հետո, թվարկված են նրա աշխատությունները և այն ձեռագրերի համարներն ու էջերը, որոնցում ընդօրինակված են դրանք:

Մատենագիտական ուղեցույց այդ ցուցակների մեջ, անշուշտ, կան, և չէին կարող չլինել, խնդիրներ ու սխալներ, քանի որ նրանք կազմվել էին ոչ թե ձեռագրերի մանրակրկիտ գիտական նկարագրությունների, այլ գերազանցապես գույքամատյանի տվյալների հիման վրա:

Այնուամենայնիվ նրանք օգնեցին և ղեկ երկար ժամանակ կօգնեն Մատենադարանի ձեռագրական նյութերի վրա աշխատող մասնագետներին, հազարավոր ստվարածավալ ձեռագրերի միջից դյուրությամբ գտնելու իրենց հետաքրքրող հեղինակների աշխատությունները: Այս ցուցակներից մեկը՝ փյուսոփայական գրականության ցուցակը, արդեն հրատարակվել է և գոհունակությամբ ընդունվել մասնագետների կողմից:

Գիտական մեծ բարեխղճությամբ ու հմտությամբ կազմվել է նաև Հայերեն պատառիկների հավաքածուի բոլոր (1838) պատառիկների ցուցակը: Պաշտպան են նաև օժանդակ այլ քարտանքներ ու ցանկեր. ձեռագրերի ժամանակագրական քարտարան, գրիչների այրբենական ցանկ, ճառերնորենների ու գանձարանների մեջ ընդգրկված նյութերի ուղեցույց ցուցակներ, Մատենադարանի ձեռագրերի նախկին և արդի համարների մանրամասն համեմատական տախտակներ, ինչպես նաև արարատառ և այլ լեզուներով ձեռագրերի ցուցակներ՝ հայերեն և ձեռագրերի լեզվով:

Հսկայական աշխատանք է կատարվել նաև Արխիվային բաժնի փաստաթղթերի նկարագրության ու բովանդակության համառոտ շարադրման գծով: Այժմ Մատենադարանի արխիվային բաժնում չկա որևէ փաստաթուղթ, որի



Նկ. 4. Հին ձեռագրերի հետազոտման աշխատասրահը

Համառոտ բովանդակությունը գրանցված չլինի համապատասխան ֆոնդի ու տարեթվի ցուցակի մեջ: Դեռևս 1944 թվականին, ծանոթանալով այդ ցուցակների պատրաստի մասերին, ակադեմիկոս Ե. Տարլեն Մատենադարանի հոշիւի մատչանում գրել է. «Շատ արխիվներ կարող էին սովորել այսուհի դարձանալի խելացի ու լրիվ աշխարհի ցուցակներ կազմելու գործը»:

Մեծ բարեխղճությամբ կազմված է նաև նատիպ գրքերի մանրամասն ցուցակ ու փարտարան, որոնցում գրքերը նկարագրված են մոտավորապես այն սկզբունքով, ինչպես նկարագրվում են ձեռագիր մատյանները:

Վերոհիշյալ ցուցակների ու ցանկերի պատրաստմանը ղուգրնթաց և, մանավանդ, նրանց կազմման աշխատանքների ավարտից հետո, Մատենադարանի ձեռագիր և տպագիր նյութերն ի սպաս դրվեցին սովետական Հայագիտության պարզացման գործին:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակագիտական ինստիտուտների գիտական աշխատողներից շատերը, Երևանի Պետական Համալսարանի և Մանկավարժական ինստիտուտի դասախոսները, ինչպես նաև հարկան բնագործիկներից, Մասկվայից ու Լենինգրադից Մատենադարան գործուղված գիտնականները ղգալի շափով օգտագործել են Մատենադարանի ձեռագրական նյութերը գիտահետազոտական բնույթի իրենց աշխատություններում, ինչպես և հրատարակել կարևոր մի շարք բնագրեր:

Այլ լրիվ ավյալներով Սովետական իշխանության տարիներին Մատենադարանի նյութերի օգտագործմամբ լույս են տեսել 600-ից ավելի աշխատություններ, հոդվածներ ու հաղորդումներ, պաշտպանվել են դոկտորական և թեկնածուական դիսերտացիաներ:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ի տարբերություն նախասովետական Հայագիտության, որի հետաքրքրության սահմանափակ շրջանակների մեջ մտնում էին գերազանցապես հայ պատմագրության, գեղարվեստական գրականության ու աստվածաբանության բնագավառները, սովետական Հայագիտությունը, ղուրս գալով հարցերի այդ ոլորտից, մեծապես բնդարձակեց ուսումնասիրության իր տեսադաշտը: Հայագիտական հարցերի մշակմանը լծվեցին հայագետ փիլիսոփաներ, կերպարվեստագետներ, երաժշտագետներ, բժիշկներ, բրմիկոսներ, մաթեմատիկոսներ և գիտության այլ ճյուղերի պատմության հարցերով հետաքրքրվող գիտնականներ:

Տասնյակ էջեր կապահանջվելին Մատենադարանի նյութերի հիման վրա կատարված աշխատանքների միայն ցանկը բերելու համար, ուստի բավարարվենք համառոտ մի թվարկումով, կատարված աշխատանքի բնույթի մասին բնդհանուր գաղափար տալու ցանկությամբ:

Լույս տեսան հայ մի շարք պատմիչների երկերի գիտական հրատարակությունները Մատենադարանում առկա բոլոր ձեռագիր օրինակների մանրակրկիտ բաղդատությամբ. ղրանք

հն՝ Կորյուն, Եղիշե, Սերեոս, Հովհ. Մամիկոնյան, Վրաց պատմություն, Զաքարիա Ագուլեցի, Արրահամ Ծրեանցի և այլն (հրատարակիչներ՝ Ս. Արեղյան, Ե. Տեր-Մինասյան, Սա. Մալխասյանց, Ա. Արրահամյան, Ի. Աբուլաձե, Ս. Տեր-Ավետիսյան)։ Եթե սրանց ավելացնենք Քյուզանդիայի անկման մասին հայ հեղինակների պատմական գործերի ժողովածուն (կազմող՝ Հ. Անասյան), XIII—XVIII դարերի 62 ժամանակագրական մանր բնագրերը, որոնք ընդգրկված են «Մանր ժամանակագրություններ» խորագիրը կրող Լեոնու սովարածավալ հատորների մեջ (կազմող՝ Վ. Հակոբյան), ինչպես նաև XIV և XV դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների 3 հատորները (կազմող՝ Լ. Խաչիկյան), ապա պարզ կլինի, որ կատարված է մեծ ու գնահատելի աշխատանք։

Հրատարակվեցին բազմաթիվ արժեքավոր բնագրեր և ուսումնասիրություններ, որոնք նոր լույս են սփռում միջնադարյան գիտության և կուլտուրայի տարրեր, ընդհանրապես վրանցից են, օրինակ, Ա. Շիրակացու, Սարկավազի և այլ հեղինակների տիեզերագիտական, մաթեմատիկական ու տոմարագիտական աշխատությունները (հետազոտողներ և հրատարակիչներ՝ Հ. Օրբելի, Ա. Արրահամյան, Գ. Պետրոսյան, Լ. Սեմյոնով), Թեոնի, Զենոնի, Հերմեսի, Դավիթ Քերականի, Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու իմաստասիրական աշխատություններն ու մեկնությունները (Հ. Մանանդյան, Վ. Չալոյան, Ս. Արեղյան, Գ. Զահուկյան), Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկության» մեծարժեք բնագիրը և բազմաթիվ աշխատություններ ու հոգվածներ բժշկության պատմության տարրեր բնագավառների մասին (Ստ. Մալխասյանց, Լ. Հովհաննիսյան, Գ. Հարությունյան, Ա. Կոնյան, Խ. Մելիք-Փարսադանյան)։ ավրիմիայի վերաբերող աշխատությունները (Կ. Ղաֆազարյան, Տ. Ղազանչյան, Ա. Հարությունյան), միջնադարյան հայ մանրանկարչության տեսական խնդիրների և պատմության մասին կարևոր ուսումնասիրություններ (Լ. Դուռնովո, Սվիրին, Ա. Մնացականյան, Ռ. Դրամիսյան, Տ. Բզմալովա, Լ. Աղարյան, Ա. Ավետիսյան և այլք), ևրաժշտության, խաղաղիտության և թատրոնի պատմության տարրեր և տապիները լուսարանող աշխատություններ (Գ. Լեոնյան, Ռ. Աթայան, Գ. Գոյան)։

Ըստ ամենայնի գնահատելի աշխատանք կատարեցին նաև հայ հին գրականության պատմության մեր մասնագետները՝ մեծանուն հայագետ Մ. Արեղյանը և նրա աշակերտներն ու հետևորդները (Կ. Մելիք-Ռահանյան, Ա. Մնացականյան, Է. Պիվադյան, Շ. Նազարյան, Մ.

Ավդալբեկյան, Ա. Սրապյան, Ա. Մարտիրոսյան և այլք)։ Նրանց ջանքերով լույս ընծայվեցին «Դուստնական ժողովրդական երգեր», «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» ժողովածուները, Մխիթար Գոշի առակները, Հովհաննես Երզնկացու, Խաչատուր Կեչառեցու, Մարտիրոս Ղրիմեցու, Հովնաթան Նաղաշի, Պաղտատար Դպրի բանաստեղծությունների ժողովածուները և այլ բնագրեր։

Զգալի աշխատանք տարվեց նաև Մատենադարանի արխիվային փաստաթղթերի ուսումնասիրության և հրատարակության գծով. լույս տեսան «Կալվածագրեր» (Հ. Արրահամյան) և «Մատենադարանի պարսկերեն հրովարտականներ» (պրակ 1-ին, Հ. Փափազյան) ժողովածուները և հարյուրավոր փաստաթղթեր կամ նրանցից կատարված առանձին քաղվածքներ XVII—XIX դարերի հայոց պատմության հարցերին նվիրված մենագրություններում։

Մատենադարանի աշխատակիցները, զբաղված լինելով հիմնականում ձեռագրերի ցուցակագրման ու մատենագիտական օժանդակ այլ աշխատանքներով, զգալի օգնություն են ցույց տվել վերահիշյալ գիտա-հետազոտական և աղբյուրագիտական աշխատանքների հեղինակներին ձեռագրագիտական իրենց փորձով ու հմտությամբ, իսկ նրանցից շատերը, աճելով Մատենադարանում, անձամբ հանդես են գալիս լուրջ մենագրությունների հեղինակների և սկզբնաղբյուրների հրատարակիչների դերում։

Մատենադարանի աշխատակիցների և Մատենադարանի հետ կապված գիտնականների ջանքերով վերջին տարիներս լույս տեսան «Մատենադարանի բանբերի» 4 արժեքավոր համարներն ու կարևոր մի շարք բնագրեր (որոնք թվարկվեցին վերը՝ գիտական մյուս հաստատությունների կողմից կատարված հրատարակությունների շարքում) և պատրաստվեցին ավելի մեծ թվով բնագրեր, որոնցից մի մասն արդեն հանձնված է հրատարակության։ Կատարված աշխատանքի մասին գաղափար տալու համար ավելորդ չենք համարում թվարկել այստեղ այդ աշխատություններից կարևորագույնները.

1. Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմութեան» գիտական բնագիրը, բանասիրական ընդարձակ առաջարանով (կազմող պրոֆ. Կ. Մելիք-Ռահանյան)։

2. «Մատենադարանի պարսկերեն հրովարտականների» Բ պրակը, ԺԷ դարի առաջին կեսի հրովարտականների հայերեն և ռուսերեն թարգմանություններով ու ընդարձակ առաջարանով (կազմող Հ. Փափազյան)։

3. Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» արժեքավոր աշխատու-

թյան բնագիրը, կազմված բոլոր առկա ձեռագրերի համեմատությամբ (կազմող՝ Վ. Առաքելյան)։

4. Արխիտակես Լաստիվերտցու «Պատմություն» բնագիրը (կազմող՝ Կ. Յուզբաշյան)։

5. Արխատուկի «Ստորոգություն» VI դարի անանուն հեղինակի մեկնության բնագիրը, ուսերեն թարգմանությամբ (կազմողներ՝ Վ. Չալոյան, Ս. Արևշատյան, Ս. Լալաֆարյան)։

6. Գրիգորիս բժշկի «Քննություն բնության մարդոյ» մեծարժեք աշխատության բնագիրը (կազմող՝ Ա. Կծոյան)։

7. Կոստանդ Զուղայեցու «Աշխարհածողվ» աշխատության բնագիրը (կազմող՝ Հ. Անասյան)։

8. «Փարիզ և Վիեննա» թարգմանական սիրավեպի գիտական բնագիրը (կազմող՝ Կ. Մեխր-Օհանջանյան) և այլ ավելի մանր բնագրեր։

* * *

Մատենադարանի առջև դրված կարևորագույն խնդիրներից է ձեռագրական գանձերի խնամքի, գիտական պահպանման ու նորոգման խնդիրը։

Նախասովետական շրջանում էջմիածնի Մատենադարանում այս ուղղությամբ գրեթե ոչ մի աշխատանք չի տարվել։

Ձեռագրերի վերականգնման, հիվանդ ձեռագրերի բուժման ու ախտահանման, պատրված թերթերի նորոգման, անկազմ ձեռագրերին նոր կազմ տալու, վնասված կազմերը նորոգելու աշխատանքների հիմքը դրվեց Մատենադարանը էջմիածնից Սրեան տեղափոխելուց հետո։ Մատենադարանը ստացավ սկզբից բիմիկոսի ու կազմարանների հաստիքներ, հետագայում դրանց ավելացան միկրոբիոլոգի, կաշեգործ ինժեների (կազմերի վերանորոգման գծով), վերականգնողների, մանրանկարների ընդօրինակող նկարիչների, լուսանկարիչների և այլ հաստիքներ։ Այսօր արդեն Մատենադարանում քայքայված ու վնասված ձեռագրերի և դիվանական փաստաթղթերի վերականգնման գործն այնպիսի բարձրության վրա է դրվել, որ մեր խորհրդանշական էն դիմում Վրաստանի, Ադրբեջանի և այլ ուսուցիչական ձեռագրատների համապատասխան մասնագետներին։

Բիոլոգիական գիտությունների թեկնածու Չ. Խոջալյանի ղեկավարությամբ Մատենադարանի վերականգնման ու նորոգման աշխատանքն իր գոյության 19 տարիների ընթացքում թերթային մարման և ախտահանման է ենթարկել բոլոր ձեռագրերը։ Հիվանդ ձեռագրերից շատերը բուժվել են գիտության կողմից

մշակված և մեզ մոտ փորձարկված վստահելի միջոցներով։ Հույժ քայքայված ձեռագրերից շատերը ամրացվել են ժելատինային հատուկ լուծույթով և ավելի քան 150 ձեռագիր՝ դուրս բերվել ցեմենտացված վիճակից ու վերանորոգվել։ Նրկրորդ տարին է ինչ մեծ հաջողությամբ կատարվում է հին կազմերի քայքայված կաշիների վերականգնման և միջնադարյան կազմարարական սկզբունքներով ձեռագրերի վերակազմման աշխատանքը՝ իր գործին հմուտ ու ջանասեր ինժեներ Ա. Խաչատրյանի կողմից։ Առաջիկայում ձեռագրերի վերականգնման ու նորոգման աշխատանքները կշարունակվեն ավելի մեծ ծավալով։

Ահա ձեռագրերի հնադարյան Մատենադարանի պատմության տարրեր շրջանների ստվերագիրը պատկերը։

Գոյություն ունենալով երկար տարիներ որպես սոսկ գրադարանային տիպի հաստատություն, այնտեղ կատարվել է զգալի աշխատանք ձեռագրերի պահպանման, նորոգման, գրանցման ու նկարագրման և, նույնիսկ, ուսումնասիրման գծով։ Սակայն կատարվածը բնավ չէր կարող քավարար համարվել, ինչպես ձեռագրական գանձերի պահպանման ու խնամքի առկա պայմանների, այնպես էլ սովետական գիտության հետագա բուռն զարգացման ի նպաստ ձեռագրերի ուսումնասիրման ու հրատարակման ծավալի և որակի տեսակետից։

Նկատի ունենալով այդ հանգամանքը, Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Մինիստրների Սովետը ամենահոգատար վերաբերմունքը ցուցաբերելով հայ ժողովրդի ստեղծած կուլտուրական արժեքների պահպանման ու խնամքի նկատմամբ, 1939 թվականին որոշեցին Սրեանում կառուցել մատենադարանի համար հատուկ շենք, ձեռագրերի պահպանման ամենալավագույն հարմարություններով։

Շենքի նախագծումը հանձնարարվեց Հայկական ՄԱԹ արվեստի վաստակավոր գործիչ, ճարտարապետ Մ. Վ. Գրիգորյանին։

Պատասխանատվության մեծ զգացումով մոտեցավ հանձնարարված գործին անվանի ճարտարապետը։ Մեկնեց Լենինգրադ ձեռագրերի պահպանման գիտական պայմանների և գրադարանների ու գրապահոցների շինարարության մասին նորագույն գրականության հետ ծանոթանալու, ինչպես և ՍՍՌԴ Գիտությունների ակադեմիայի գրադարանին կից Արխիվային փաստաթղթերի վերականգնման ու կոնսերվացման լաբորատորիայի ղեկավար, անվանի գիտնական պրոֆ. Ն. Պ. Տիխոնովիչ խորհուրդներ ստանալու նպատակով։ Անհրաժեշտ նյութեր ամբարած իրեն ավերադառնալով Մ. Գրիգոր-

յանը. 1940 թվականին. ձեռնարկեց նախագրծ-
ման աշխատանքներին, որոնք սակայն դադա-
րեցին Հայրենական Մեծ պատերազմի առաջին
տարիներին: 1943 թվականին կրկին բարձրաց-
վեցին շենքի նախագծման ու կառուցման հար-
ցերը: Մատենադարանի նոր շենքի նախագծում
ձեռագրերի պահպանման տեխնիկայի արդի
նվաճումները ստեղծագործարար պետք է զու-
գակեցվեն հայկական հաղորամյա ճարտարա-
պետական արվեստի դասական ձևերի օգտա-
գործման հետ: Պատերազմի ժանր տարիները
չխանգարեցին Մ. Գրիգորյանին մեկնել շրջան-
ները հայ ճարտարապետական նշանավոր կո-
թողներն ուսումնասիրելու համար. նա լինում է
Հաղբատում, Եսենաճում, Տաթևում և այլ վայ-
րերում, դիտում դրանք ազգային ճարտարա-
պետության լավագույն հատիկները հավաքողի
աչքերով:

Որովհետև Մատենադարանի նոր շենքը կա-
ռուցել նրանից կենտրոնական մասում, ստալի-
նի պողոտայի վերջում՝ Փանարեոի սարահարթի
լանջի վրա:

Ներքին կառուցումն սկսվեց 1945 թվականին.
սակայն գործն ընթանում էր դանդաղ. 1947—
1953 թթ. ժամանակավորապես դադարեցվեցին
կառուցման աշխատանքները, ավելի հրաժարա-
պրոյեկտներական ձեռնարկությունների և
հնակարանների շինարարությունն արագացնելու
նպատակով: 1953 թ. շինարարությունը վեր-
սկսվեց ու մինչև իր ավարտը՝ 1959 թվակա-
նը, շարունակվեց տարեց-տարի ուժեղացող
ընթացքով:

Ենթեր իր հատակագծով գրեթե քառակուսի
է. Ստալինի պողոտայից դեպի շենքի մատույց-
ները տանում է գրանիտով սալարկված, եր-
կու կողմերից կանաչապատ ճանապարհը, ապա
սկսում են դեպի շենքի առաջին հարթակը
տանող գրանիտե 68 աստիճանները:

Առաջին հարթակից դեպի երկրորդը, որ
գտնվում է անմիջապես շենքի առջևում, պետք
է բարձրանալ երկու համալսարանի դասավորու-
թյուն ունեցող նույնանման պատուհաններով.
որոնց միջին մասում դրվելու է հայ ժողովրդի
հանճարեղ զավակ Մեսրոպ Մաշտոցի կոմպո-
զիցիոն արձանը (արձանի պատրաստումը
պատվիրված է քանդակագործ Ղ. Չուրարին):
Վերին հարթակում, անմիջապես ճակատային
պատի մոտ, դրվելու են հին Հայաստանի գի-
տության ու արվեստի խոշորագույն գործիչներ՝
Մովսես Խորենացու, Եղիշեի, Անանիա Շիրա-
կացու, Մխիթար Գոշի, Ռորոս Ռոսլինի և Ֆրի-
կի արձանները:

Ենթեր հյուրընկալ դռներից այցելուն մտ-
նում է գլխավոր նախասրահը, որի լուծման
մեջ օգտագործված են Մանահնի վանքի առաջին
25 հանգանակ:

գավթի ճարտարապետական ձևերը: Նախա-
սրահի պատերն ու սյուները երեսպատված են
հինի մուգ կարմիր հղկված մարմարով, իսկ
գետնախորիսին ու հատակը՝ երևանյան փայ-
լեցված բազալտով:

Առաջին հարկում գտնվում են՝ դասախո-
սությունների սրահը (180 տեղով), Տպագիր
գրքերի և մանրանկարների պատճենների ցու-
ցասրահը (կառուցված Անիի Առաքելոց եկե-
ղեցու գավթի ճարտարապետական ոճով), Զե-
ռագրերի գիտական պահպանման սեկտորի աշ-
խատասենյակը, դիմելոցի առանձնասենյակը,
ընդունարանը և գրասենյակը:

Երկրորդ հարկում (որը առաջին հարկի եր-
կու մեծ սրահների առկայությամբ՝ լրիվ հար-
կաբաժին է) կառուցված են գիտական աշխա-
տողների մեկուսացված աշխատանքի համար 11
խցեր և այլ օժանդակ սենյակներ:

Նրբորդ հարկի կենտրոնական ընդարձակ
մասում գտնվում է հոյակապ ցուցասրահը, կա-
ռուցված ժԱ—ԺԳ դարերի գավթիների ճար-
տարապետական ձևերի ներդաշնակ օգտագործ-
մամբ. չորս սյուների և նրանցից վեր բարձ-
րացող առագաստների վրա կանգնած է ութա-
նիստ դմբեթը, որը վերևից հատվելով դարձ-
ված է լուսամուտ: Սրահի հարավային պատի
վրա գտնվում է կիսաշրջանակաձև մի այլ լու-
սամուտ, որից տեսարան է բացվում դեպի Ա-
րարատյան հիսարանի դաշտը՝ իր ձյունապատ
ալիներ կառարներով, և սոցիալիստական Հա-
յաստանի մայրաքաղաքը՝ իր դյուրիշ ճարտա-
րապետական անսամբլներով ու նորակառույց-
ներով:

Նույն այս հարկում են գտնվում հայագի-
տական սրահը, որը հարմարեցված է ձեռագրե-
րի ուսումնասիրության համար, գրադարանի
ընթերցասրահը, հնատիպ գրքերի պահոցը, Մա-
տենագիտական սեկտորի աշխատասենյակները
և այլ օժանդակ սենյակներ:

Չորրորդ հարկը, նման երկրորդի, գրավում
է շենքի հյուսիսային կեսը միայն. այստեղ
գտնվում են վերանորոգման բաժինը, կազմա-
տունը, արխիվը և այլ սենյակներ:

Ձեռագրերի պահոցները զետեղված են ցուցիկի
մակերևույթից ցած գտնվող երեք կիսահարկե-
րում. շենքի աջ թևում: Այլումիսն ալիքավոր
թևերից պատրաստված դարակների վրա
տեղադրվելու են ձեռագրերը պառկած դիրքով,
առանց դիպչելու միմյանց: Պահոցներում ամառ
ու ձմեռ անխափան պահպանվելու է կայուն
ջերմաստիճան և հարաբերական խոնավություն՝
հատուկ սարքավորումների միջոցով:

Օճկոլային հարկաբաժնում են գտնվում
նաև լուսանկարչական աշխատանոցը, տպագիր
գրքերի և մամուլի պահոցները և այլ օժանդակ



Նկ. 5. Ջեաղրերի ցուցասրահի մի անկյուն

սենյակները Այս հարկի աջ և ձախ անկյուններին գեպի շորորոց հարկ են բարձրանում հատուկ աստիճաններ և վերելակներ:

Այս սեղմ ու թուցիկ նկարագրությամբ անհնարին է բավարար պատկերացում տալ Մատենադարանի նոր շենքի ճարտարապետական մասշտաբման ու ձևագրերի պահպանման և ուսումնասիրման համար այնտեղ ստեղծված պայմանների մասին: Այն հույսկապ մի հուշարձան է, որը մեր ժամանակակիցներին և ապագա սերունդներին անբարբառ պատմելու է այն մասին, թե լենինյան մեծ պարտիայի ղեկավարությամբ կոմունիզմ կառուցող ժողովուրդը ինչպես է գնահատում ու գուրգուրանքով պահում անցյալից ժառանգությունը ստացած կուլտուրական արժեքները:

Նոր շենքի շահագործման հանձնելու նախօրյակին կատարվեց նաև Մատենադարանի վերակառուցումը: Ձևագրատուն-Մատենադարանի հիմքի վրա ստեղծվեց Հայկական ՍՍԻ Միջնիստների Սովետին առընթեր Հին ձևագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ-«Մատենադարանը»:

Հայկական ՍՍԻ Միջնիստների Սովետի 1959 թ. մարտի 3-ի որոշման մեջ այդ մասին ստված է.

«Հին ձևագրերի գիտական ուսումնասիրության և նկարագրության, Մայր ցուցակի կազմման և Մատենադարանում պահվող պատմա-գրական, փիլիսոփայական, բժշկական, մաթեմատիկական, աստղաբաշխական ու աշխարհագրական, ինչպես նաև գեղարվեստական գրականության հին հուշարձանների հայերեն և ռուսերեն լեզվով հրատարակման գործը ուժեղացնելու նպատակով Հայկական ՍՍԻ Միջնիստների Սովետը որոշում է.

1. Հայկական ՍՍԻ Միջնիստների Մովետին կից Հին ձևագրերի Պետական Ձևագրատուն «Մատենադարանը» դարձնել Հայկական ՍՍԻ Միջնիստների Սովետին առընթեր Հին ձևագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ-«Մատենադարան»:

2. Հին ձևագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ-«Մատենադարանի» վրա գնել հետևյալ խնդիրները.

ա) Ձևագրերի խնամքը, պահպանումը, վերանորոգումը և միկրոպատճենահանումը:

բ) Ձևագրական նոր հուշարձանների հավաքումը:

գ) Ձևագրերի գիտական նկարագրությունը, Մայր ցուցակի՝ հայերեն և ռուսերեն լեզուներով պատրաստումը:

դ) Կարևոր բնագրերի, ինչպես և հայ մանրանկարչության հուշարձանների ուսումնասիրությունը ու հրատարակումը:

ե) Համաշխարհային նշանակություն ունեցող հուշարձանների թարգմանությունը ռուսերեն և արևմտա-եվրոպական լեզուներով:

զ) Հայ ժողովրդի ձևագրական կուլտուրայի ամենաարժեքավոր հուշարձանների մասսայականացումը, հայերեն ձևագրերը ներկայացնող մատչելի գիտական գրքերի ու բրոշյուրների հրատարակությամբ...»:

Գիտա-հետազոտական ինստիտուտ-«Մատենադարանի» առջև դրված խնդիրների կատարումն ապահովվում են նորաստեղծ երեք գիտական սեկտորների (Մատենագիտական, Բնագրերի ուսումնասիրման ու հրատարակման և Գիտական պահպանության սեկտորներ) և զբաղաբանային ֆունկցիաներ ունեցող նախկին բաժինների (արխիվ, գիտական գրադարան, վերանորոգման և սպասարկման բաժիններ) համատեղ աշխատանքով:

Մատենագիտական սեկտորի հիմնական խնդիրն է առաջիկա 15 տարիների ընթացքում կազմել հայերեն և ռուսերեն լեզուներով Մատենադարանի հայերեն բոլոր ձևագրերի մանրամասն, իր կատարելությամբ նախատիպը չունեցող գիտական ցուցակը, պարբերաբար հրատարակելով ցուցակի պատրաստի հատորները: Պատասխանատու և ղեկավարին այս գործին սեկտորի վարիչ, անվանի ձևագրագետ Ա. Մնացականյանի ղեկավարությամբ՝ լծվել են կարող ուժեր՝ պատմաբաններ ու բանասերներ Գ. Արզումանյանը, Ա. Մարտիրոսյանը, Ս. Լալաֆարյանը, Ս. Քոյանյանը, Լ. Խաչերյանը, Ս. Ավագյանը, Հ. Հակոբյանը և ուրիշներ:

Բնագրերի ուսումնասիրման և հրատարակման սեկտորը, բնականաբար զբաղվելու է հիմնականում ձևագրական արժեքավոր բնագրերի ուսումնասիրման, հայերեն ու ռուսերեն լեզուներով հրատարակման կարևոր աշխատանքով: Սեկտորը ղեկավարում է իրանագետ ու հայագետ, պատմական գիտությունների թեկնածու Հ. Փափազյանը: Սեկտորի գիտական աշխատակիցները՝ պատմ. գիտությունների թեկնածուներ՝ Վ. Գրիգորյանը, Մ. Դարբինյանը, Մ. Մխիթարյանը, Լ. Խանլարյանը, ինչպես նաև Ա. Մարտիրոսյանը, Վ. Գևորգյանը, Հ. Ամալյանը, Պ. Մուրադյանը, արդեն իսկ լծվել են ստեղծագործական աշխատանքի, ձևաարկելով մի շարք ուսումնասիրությունների և արժեքավոր սկզբնաղբյուրների հրատարակության պատրաստման գործին:

Նորաստեղծ ինստիտուտի գիտա-հետազոտական աշխատանքների առաջին պլանի մեջ ուշադրություն են գրավում պատմագրական, փիլիսոփայական, գրական-գեղարվեստական արժեքավոր բնագրերի ուսումնասիրության և հրատարակման հետ կապված մի շարք ընթացքներ:

Իրանցից են, օրինակ, Սամուել Անեցու, «Ժամանակագրությունը», ԺԴ—ԺԵ դարերի հայերեն կալվածագրերի և նվիրաբերական արձանագրությունների ժողովածուն, Մատենադարանի պարսկերեն կալվածագրերի առաջին պրսկը (ԺԴ—ԺԶ դդ. կալվածագրերով), «Նյութեր ԺԷ—ԺԸ դարերի հայ արհեստագործության և առևտրի մասին» ժողովածուն, Վանական հաստատություններին պատկանող ճորտերի իրավական վիճակի մասին ուսումնասիրությունը, Հովհան Որոտնեցու փիլիսոփայությանը վերաբերող մենագրությունը, «Գեորգ Եկեղացու ուղղափառական աշխատությունները» (ուսումնասիրություն և բնագիր), «Բառարանագիտությունը միջնադարյան Հայաստանում» (ուսումնասիրություն և բնագիր), «Միջնադարյան հայկական առականք» ստվարածավալ ժողովածուն, որը կազմվում է 150 առականքների մանրակրկիտ ուսումնասիրության ճանապարհով, «Խրատք և խմաստութիւն Խիկարայ» լայն տարածում գտած գրույցի հայերեն հնագույն թարգմանության բնագիրը՝ բանասիրական ուսումնասիրությամբ, «Միջնադարյան պատմական պոեմները» ժողովածուն, ԺԶ դարի բանաստեղծ Հովասափ Սևրաստացու երկերի գիտական հրատարակությունը, ԺԸ դարի բանաստեղծ Հովհաննես Կարնեցու աշխարհիկ տաղերի ժողովածուն և այլն:

Ռուսերեն թարգմանվող բնագրերից հիշատակենք Ղազար Փարպեցու և Զարարիա Քանաբեկցու «Պատմություն»-ները և Անանիա Շիրակացու «Տիեզերագիտությունը»:

Առաջիկայում Մատենադարանի գիտական թեմատիկայի մեջ կմտնեն նաև հայ մանրանկարչության, երաժշտագիտության, բժշկության, տիեզերագիտության և այլ բնագավառների կարևոր հուշարձանների ուսումնասիրման և հրատարակման հետ կապվող թեմաներ:

Ձևադրերի գիտական պահպանության նորաստեղծ սեկտորը, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ս. Արևշատյանի ղեկավարությամբ, զբաղվելու է հիմնականում ձևագրերի գիտական պահպանման, բոլոր ձևագրերի միկրո-պատճենահանման գործի կազմակերպման ու հսկողության, նոր ձևագրական հուշարձաններ ձևաբերելու նպատակով արշավախմբեր կազմելու, Մատենադարանի մշտական թանգարան-ցուցասրահի գիտականորեն կոմպլեկտավորելու և Մատենադարան այցելող էքսկուրսիաների սպասարկման աշխատանքներ:

Բովս Գիտական պահպանության սեկտորի աշխատակիցները (գլխավոր պահպան Ծ. Ծգանյան, էքսկուրսավար Ծ. Սմբատյան, լաբորանտներ՝ Է. Կորիսմազյան և Է. Հակոբյան) իրենց անմիջական պարտականություններն ունենալով, զբաղվելու են նաև առանձին գիտական հարցերի մշակմամբ: Սեկտորը հատկապես լաբաված աշխատանք պետք է տանի բոլոր ձևագրերի միկրո-պատճենահանման գծով տարվող աշխատանքները կանոնավոր հունի մեջ դնելու և առաջիկա 10 տարվա ընթացքում այդ կարևոր աշխատանքն ավարտելու ուղղությամբ:

Հանրահայտ է, որ հայերեն ձևագրերի հատուկ հավաքածուներ կան բացի մեր Մատենադարանից նաև Սովետական Միության և արտասահմանյան այլ վայրերում (Թբիլիսի, Լենինգրադ, Մոսկվա, Երուսաղեմ, Վենետիկ, Վիեննա, Սպահան, Փարիզ, Լոնդոն և այլուր):

Ձևագրական առանձին բնագրերի ուսումնասիրությունն ու հրատարակությունը առանց Մատենադարանից դուրս գտնվող ձևագրերի օգտագործման անհնարին է, ուստի հայագիտության զարգացման շահերը թելադրում են սերտ գիտական կապեր հաստատել արտասահմանյան հայկական Մատենադարանների հետ:

Մատենադարանից դուրս գտնվող ձևագրերի ըստ կարելիության հավաքման, կամ միկրո-պատճենահանման ու հաշվառման աշխատանքի ծանրությունը պետք է ընկնի ձևագրերի գիտական պահպանման սեկտորի վրա:

Մատենադարանի ձևագրերը և արխիվային փաստաթղթերը մատչելի են նաև Գիտությունների ակադեմիայի, Պետական համալսարանի և այլ գիտական հաստատություններում աշխատող գիտնականներին, որոնք օգտվելով այդ մեծ գանձարանից, կատարում են իրենց ուսումնասիրությունները և շարադրում նորանոր աշխատություններ:

Ահա բնդհանուր գծերով Մատենադարանի այսօրվա պատկերը: Հայ ժողովրդի հազարամյա կուլտուրայի համաշխարհային արժեք ունեցող հուշարձանների պահպանման և գիտականորեն մշակման ու հրատարակման գործի ծավալման համար կյանքի կոչված նորաստեղծ գիտահետազոտական ինստիտուտ-«Մատենադարանի» ողջ երիտասարդ կուլեկտիվը՝ ջանք չի խնայի ստեղծագործ ազնիվ աշխատանքով ապահովելու հարազատ սլարտիսյի և կառավարության կողմից նրա վրա դրված խնդիրների կատարումը:

Լ. ԽԱՉԻԿՅԱՆ